№ 227 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 6 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1918
ՓԱՌԱՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԲՈՒՆԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 6 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 227

Նոյեմբերի 1-ից մինչև դեկտ. 1 ը Թիֆլիսում 10 ռուբլի։
Առանձին համարները Թիֆլիսում և գաւառներում 50 կ., երկաթուղային կայարաններում 70 կոպ.։

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Tiflis. Rédaction „Mschak"
Соломоновская, 21.

Խմբագրատան տելեֆոն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—3 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 70—40 կոպ.։

Հասցէն փոխելու համար պէտք ուղարկել թէ հին հասցէնից թէ 1 ռուբլի։

Ղևոնդ քահանան տիրուհու, որդոց՝ Աննայի և Արամի, փեսայ Սեդրակի և անեծորդի Գէորգ և Արմենակ Թոսատեանների հետ ժիսին յայտնում է բարեկամներին և ծանօթներին իր թանկագին որդու՝

ՀԱՅԿ ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆԻ

անժամանակ մահվան մասին, որ տեղի ունեցաւ կիրակի, ժամը 4½-ին, կարճատև հիւանդութիւնից յետոյ։ Ամփոփը ամեն օր եր. ժ. 6-ին Թաղումը չորեքշաբթի, նոյեմբ. 6 ին իր բնակարանից (Мало-Ванкская Колокольный туп. № 1) Քանաչեան եկեղեցի և ապա դէպի Խօջիվանքի գերեզմանատուն։ 2—1

Վշտաբեկ Սրբուհի Ստեփանեան իր զաւակներով, Նունէ, Սեդրակ և Վարդան Շուքաշեանները և Վարվառէ Շահպարոնեան խորին կսկիծով յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջիններն իրանց թանկագին մահուան և հոր, իսկ վերջիններն իրանց փեսայի՝

Կապրակետ Հասրաթեան ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ նոյեմբերի 3-ին։ Հոգեհանգիստը չորեքշաբթի, նոյեմբերի 6-ին երեկոյեան ժամը 5 և կէսին։ Մարմնի յուղարկաւորութիւնը հինգշաբթի, նոյեմբերի 7 ին, առաւօտեան ժամը 10-ին բնակարանից (Шаворնի պերէուլոկ № 14) դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատունը։ 1012. 1—1

Արշակ, Թանդիլ և Օլգա, Աննա Ղուլեանցները սրտի անհուն ցաւով յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջիններն իրանց սիրելի հայր, երկրորդները իրանց թանկագին սկեսրայր՝

ԳՐԻԳՈՐ ՂՈՒԼԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ կիրակի առաւօտեան։ Հոգեհանգիստը չորեքշաբթի երեկոյեան։ Թաղումը հինգշաբթի։ Յուղարկաւորութիւնը բնակարանից (Ս. Մինասեան, իսկ թաղումը հինգշաբթի։ Յուղարկաւորութիւնը բնակարանից (Ս. Մինասեան, իսկ թաղումը հինգշաբթի։ Յուղարկաւորութիւնը բնակարանից (Ս. Մինասեան, Նաակի փողոց № 6) դէպի Կարմիր Աւետարան եկեղեցին, այնտեղից Խօջիվանք։ 1008. 1—1

Թիֆլիսի խոտաջուրցի հացագործների հաժարութիւնը յայտնում է սրտի անհուն կսկիծով հայրենիքի հերոս՝

ՊԵՏՐՈՍ ԿՐԿՐԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ Շահ-Պարոնեանի հիւանդանոցում ամսոյ 3 ին ժամը 12 և կէսին տառապելով հայրենիքում թշնամու գնդակներից ստացած վէրքերից։ Յուղարկաւորութիւնը այսօր, ժամը 10-ին, Շահ-Պարոնեանի հիւանդանոցից (Ртищевская ул.) դէպի Կուկիայի եկեղեցին, որտեղից հանդիսաւոր պատարագից յետոյ կուղեկցվին դէպի կաթոլիկաց Կուկիայի գերեզմանատունը։ 1013. 1—1

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Նախկին ասիստենտ Բերլինի և Մոսկվայի համալսարանների կլինիկաների. մասնագէտ ներքին հիւանդութիւնների—թոքախտ և սրտի. ընդունելութիւնը՝ իր բնակարանում Հեռաձայնութիւնը և բժշկութիւնը X ճառագայթներով։
Ամեն օր՝ 9—1 և 5—8 ժամը երեկ.։
Բերուոլովսկայա փ., № 23. Հեռ. 7—92.
առ. (ա. օ.) 100—34

Բացված է
ԱԶՔ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲՈՒԺԱՐԱՆ
Մշտական մասնակցութեամբ
ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. ԴՕՆԽԻՆԻ
Նախկին երկարամեայ ասիստենտ Պարիզի և Վիեննայի համալսարանների աչքի հիւանդութիւնների կլինիկաների. ընդունում է
Աչքի հիւանդութիւններ
ունեցողներին ցերեկվայ ժամը 9-ից մինչև 11½-ը և երեկ. 4—7½-ը։ Միքայէլեան փող. 141 («Անալոյէն» մոտիկ)։ Մանր և միջակ. կարգաւ հիւանդները ընդունվում են լրիւ պանսիոնով։
առ. (ա. օ.) 849. 100—24

ԲԺԻՇԿ
ԳՐ. Ց. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ
Նախկին ասիստենտ Ժընէվի համալսարանի կլինիկաների և պրոֆ. Oltramare-ի վեներական հիւանդութիւնների մասնագիտական բուժարանի։
Ներքին և կանանց հիւանդութիւններ. մասնագէտ վեներական, միզասեռական և կաշի ցաւերի։ Հին ու նոր տիպեր և նրա կոմպլիկացիաները. ներարկումն պրոֆ. Ehrlich-ի «606»-ի և «914»-ի պրեպարատների։ Էլեքտրաբուժում։
Ընդունելութիւնն առ. ժ. 10—12-ը, երեկ. 5—7-ը. կանանց համար 12—1-ը։
Կիրակի օրերը 3 ից ընդունելութիւն ցեր. ժ. 11—12-ը։
Կիրոչնայա փ. № 11.
առ. 709. 100—42

ԲԺԻՇԿ
Կ. Ց. ՂԱՋԱՆՃԵԱՆ
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ։
Ընդունում է ամեն օր առաւ. ժ. 10—12-ը, երեկ. ժ. 5—7 ը, Աբաս-Աբադակի պերեուլոկ № 7։
առ. (ա. օ.) 877 100—26

ԲԺԻՇԿ
Մ. Կ. ՎԱՆՑԵԱՆ
Ներքին եւ ջղային հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր՝ 12—1-ը ցեր., 6—7 երեկոյեան։ Շաբաթ օրերը ձրի ընդունելութիւն չքաւորների համար։
Абасъ-Абадская пл. д. № 1.
առ. (ա. օ.) 976. 100—8

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱ
Մ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆԻ
Ոսկեայ և պատիւ առաջին աստիճան, արհեստական ատամներ՝ ֆարֆորից և ոսկուց (առանց քիմքի), վնասված ատամներ և այլն։
Ընդունելութիւնը՝ ցեր. 10—2-ը ժ.
Երեկոյեան 4—6 ժ.
Կիրակի օրերը 10—12 ժ.։
Լերմոնտովսկայա փողոց № 1, մուտքը Աբաս-Աբադակի պերէուլոկից։
առ. 885. 100—13

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Սիֆիլիս (ներքսկ. «914»), վեներական, մարզասեռական և կաշու հիւանդութիւններ. էլեքտրաբուժում. հիւանդների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, ժամը 12—2-ը, 5—6-ը։ Կանանց համար ժամը 2—3-ը ցերեկվայ։
Հասցէն՝ Սօլոլակ, Բէբուտովսկայա փող. № 33 (անկիւն Պասկեվիչի փող.)։
Հեռախօս 11—75.
առ. (հ. կ.) 1395 100—88

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ. ՄԻՋՈՑՈՎ

—o—

ՎՐԱՑ ՍՕՑ. ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ

ԹԻՖԼԻՍ, 2 նոյեմբերի.—Վրաստանի սոցիալ-դեմոկրատական դիմեց միջազգային սոցիալիստական բիւրոյին մի նամակով, որին ստորագրել են Ն. Ն. Ժորդանիա, Իր. Գ. Մնրելիէլի, Ն. Ս. Չիչինաձէ, Եւ. Գ. Գեգեչկորի և Ն. Վ. Բաժիլիի։

Նամակում նկարագրված է Վրաստանի անցած պատմական ուղին, այն ժամանակաշրջանը, երբ նա միացաւ Ռուսաստանին և մինչև մեր օրերը։

«XVIII դարավերջին մեր ժողովրդի դրութիւնը դարձաւ անտանելի։ Անընդհատ պատերազմների և հարձակումների յարձակումների ազդեցութեան տակ նրա մարդկանց թիւը 7 միլիոնից իջաւ 1 և կէս միլիոնի...։ Եւ այն ժամանակ որոշուեցաւ Վրաստանը վանան գալու Թիւրքիայի և Պարսկաստանի դէմ յանձին Ռուսաստանի, որին միացաւ մի պայմանագրով, որ Ռուսաստանին էր վերապահում ներքին պետական ինքնավարութեան իրաւունքը։

«Ռուսաստանը պաշտպանութիւն և խաղաղութիւն բերեց Վրաստանին, նրա միջոցով և ամբողջ Անդրկովկասին, որ պատակված էր նրա վրա ընակվող ցեղերի թշնամանքով և փոխադարձ կատարածներով։

Այնուհետև նամակում խօսվում է այն ճանապարհի մասին, որով անցել է Վրաստանի դեմոկրատիան ռուսական դեմոկրատիայի հետ միասին ինքնակալութեան լծի դէմ կռուելու գործում, ինքնակալութիւն, որ հատուցրել է ճնշում էր Ռուսաստանի բոլոր ժողովուրդները։ և այն խնդրութեան մասին, որով Վրաստանը դիմաւորեց ռուսական յեղափոխութեան սիրիրը։ Բայց «շուտով նրա ծոցում երևան եկան այդ յեղափոխութեանը թշնամի ոյժեր անիշխանական, որոնց զարգացումը նրան բերում էր կործանման և պատրաստում էր հակայեղափոխութեան յաղթանակը ռուսական պետութեան աւերակների վրա։ Վրաստանի պրոլետարիատը Ռուսաստանի գիտակից սոց. դեմոկրատիայի հետ թիկունք-թիկունքի մինչև վերջը կռուում էր այդ ոյժերի դէմ, մինչև վերջը հաւատարիմ մնաց այն քաղաքականութեան, որը իրան նպատակ էր դրել իւրացնել դեմոկրատիայի բոլոր ոյժերը յանուն յեղափոխութեան փրկութեան։ Բայց ապարդիւն անցաւ այդ պայքարը... Բոլշեվիկները իշխանութիւնը իրանց ձեռքը ձգելով, քաղաքացիական պատերազմ բռնկեց Ռուսաստանի ողջ տարածութեան վրա և պետութիւնը բաժանվեց մասերի, որով և մենք կորվեցինք հիւսիսից։ Մեր պրոլետարիատը նախաձեռնութիւն վերցրեց իր վրա Անդրկովկասի վարչութիւն ստեղծելու...։ Դրանով նա Անդրկովկասը փրկեց քաղաքացիական պատերազմից, որը տեղական պայմաններում անխուսափելիօրէն պիտի բարդանար ազգամիջեան գժտութիւններով։ Եւ այս բոլորից բաժանվեցին մեր և Ռուսաստանի քաղաքական կեանքի ուղիները... Բայց քանի դեռ Ռուսաստանի պատմական ուղու վրա առկայծում էր հաստատուական հիմ. ժողովի գումարման յոյսը, մենք մեր ձեռական կապը չը կտրեցինք նրա հետ։ Բայց ռուսական զօրքի հեռանալով կտրվեց պետական վերջին կապը Վրաստանի և Ռուսաստանի միջև։ Վրաստանը կրկին իրան զգաց այն դրութեան մէջ, որից փրկում էր դուրս գալ 120 տարի առաջ»։ Այնուհետև նամակը նկարագրում է այն ողբերգական դրութիւնը, որի մէջ ընկաւ Անդրկովկասը, որի սահմաններից հեռացող ռուս զօրքի եաւիրց հեղեղի նման ներս խուժեցին թիւրքական հրոսակները, «որոնց առջև յարութիւն առան անասնական նուաճումների յոյսեր արևելքում»։ «Փորձ եղաւ անդրկովկասեան ժողովուրդների՝ միացնել ողջ Անդրկովկասը պաշտպանելու, բայց այդ փորձը հանդիպեց Անդրկովկասը պատակող հայ-թաթարական թշնամանքի խոչընդոտին»։ «Վճռական բոպէին, երբ թիւրքական զօրքերը դրաւեցին Հայաստանը և վրացական տերիտորիայի մի մասը, Արևելեան Անդրկովկասն ամենատուր եղաւ թիւրքիային...։ Անդրկովկասը ընկաւ։ Մենք մնացինք մենակ, մենակ կրակէ օղակի մէջ, ամեն կողմից շրջապատված թշնամիներով։ Եւ այսպիսի մի ճգնաժամային մոմենտին՝ երկրի փրկութեան գործը — յեղափոխութեան պաշտպանութիւնը, կարգ ու կանոնի պահպանութիւնը, սահմանների ապահովութիւնը և արտաքին տիսարհի յարաբերութիւնը իրանց վրա վերցրին Վրաստանի քաղաքները։ Ներքին դժուարութիւնները սեփական ոյժերով յաղթահարելով, թիւրքիայի հարուածը ետ մղելու համար Վրաստանը հարկադրված էր գտնել արտաքին մի ոյժ։ Բայց հենց կարող էինք մենք գտնել այդ ոյժը։ Մենք ամեն կողմ դիմեցինք օգնութեան, բայց բոլոր մեր դիմումները մնացին ապարդիւն։ Դաւաւորված հանգամանքներում միակ ոյժը, որ կարող էր մեզ օգնել, նկատվեց Գերմանիան... Եւ մենք պայմանագիր ստորագրեցինք Գերմանիայի հետ, որը պիտի պաշտպանէր մեզ թիւրքիայից և չը խանգարէր մեր ներքին գործերին։ Երկու պայմանն էլ կատարեց Գերմանիան։ Ամենամեծ օրերին, երբ Գերմանիայի օգնութիւնը աւելի քան անհրաժեշտ էր մեզ համար, մենք չը հրաժարվեցինք զերման. մելիտարիզմը անիծայ քննադատելուց, բայց այժմ, երբ այդ իմպերիալիզմին իր դատավճիռն է արձակել ինքը գերման ժողովուրդը, այժմ մենք մեր պատուի պարտքն ենք համարում վկայել ինտերնացիոնալի առջև, որ Գերմանիան Վրաստանում իրան չարատաւորեց ոչ ուխտադրժութեամբ, ոչ բռնութեամբ, և ի չարը չը գործադրեց ոչ մեր վստահութիւնը և ոչ իր հզօրութիւնը։ Այնուհետև խօսվում է այն դրական հետևանքների մասին, որ ձեռք բերվեցին պրոլետարիատի՝ ներքին պետական վերաշինութեան բնագաւառում գործ դրած քաղաքականութեամբ։ Բայց դեմոկրատական ջանքերի հաղթութիւնը դարձաւ վայրենի տատարեան տարրերի Թիւրքիայի համար, որը լծեց Վրաստանին փրկեց Գերմանիայի միջամտութիւնը։ Բոլշեվիկների համար, որոնց վրացական հանրապետութիւնը ատելի է իբրև նախկին Ռուսաստանի միակ անկիւնը, որ մինչև վերջն էլ չը ճանաչեց նրանց իշխանութիւնը և հաւատարիմ մնաց փետրվարեան յեղափոխութեան տառնդներին։ և Ռուսաստանի այն հակայեղափոխական ոյժերի համար, որոնք, ռուսական երկիրը հաւաքելու անուան տակ, պատրաստում են վերականգնել ցարական բէժիմը։ «Եւ միակ հնարաւոր ելքը այս շրջագծից, միակ յենարանը մեզ համար այս երկիրների հանդէպ՝ բանուորական ինտերնացիոնալի մէջ է։ Ձեզ, ինտերնացիոնալի ներկայացուցիչներ, դիմում ենք մենք Վրաստանի պրոլետարիատի և ողջ վրաց ժողովրդի անունից։ Ցեղափոխութեան բովում է մեր ժողովուրդը կռել-կոփել իր պետութիւնը և նա վճռել է մինչև վերջը բոլոր ոյժերով պաշտպանել այդ պետութեան անկախութիւնը։ Դրանում է նա տեսնում իր գոյութեան պահպանութեան և կուլտուրական զարգացման հնարաւորութեան գրաւականը։ Ազատութիւնը և մշտնջենական խաղաղութիւնը համարելով իր ներքին և արտաքին քաղաքականութեան նպատակ, մեր ժողովուրդը դիմում է ձեզ, ողջ աշխարհի պրոլետարիատի ներկայացուցիչներ։ Նա ցանկանում է միս ժողովուրդների հետ ձեռք ձեռքի տուած աշխատել և կեանքում մարմնացնել արդարութեան մշտնջենական իդեալները։ Ձեզանից նա սպասում է աջակցութիւն և օգնութիւն՝ իր անկախութեան հաստատման և մշտնջենական չեզոքութեան երաշխիք»։

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՆՒ. ԵՒ ՁԻՆՒ. ՊԱՏԳԱՄ. ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

—

ԹԻՖԼԻՍ, 3 նոյեմբերի.—Բանուորների և զինուորների պատգամաւորութեան Թիֆլիսի խորհուրդը, քննութեան առնելով միջազգային դրութիւնը, որ առաջացել է եւրոպական վերջին դէպքերի հետևանքով, նոյնպէս և Վրաստանի դեմոկրատական հանրապետութեան դրութիւնը, կայացրեց հետևեալ որոշումները. 1) Համաշխարհային պատերազմի ժամանակ վախճանը պահանջում է դեմոկրատիայից, մասնաւորապէս՝ բանուոր դասակարգից, բոլոր ոյժերի լարումն հասնելու իրանց շահերին համապատասխանող ընդհանուր դեմոկրատական հաշտութեան՝ ժողովուրդների համաձայնութեան հիմունքներով, վերջիններիս կատարեալ զինաթափումով, սահմանելով իրաւահաւասարութիւն բոլոր պետութիւնների վերաբերմամբ՝ սրանց միջև ծագած որևէ հարց լուծելու ժամանակ։ 2) Միջազգային ներկայ դրութեան ո... ծը վրաց դեմոկրատական հանրապետութեանը, որ մինչև այժմ պահպանում է իր մէջ ռուսական մեծ յեղափոխութեան նուաճումները, սպառնում է մահաբեր երկիւղ այն ոյժերի կողմից, որոնք թշնամի են այդ նուաճումներին։ հետևաբար, Վրաստանի դեմոկրատիայից պահանջվում է խողոր արթնութիւն և նրա բոլոր ոյժերի մխացումն է պաշտպանութիւն իր անկախութեան և ազատութեան։ 3) Վրաց դեմոկրատիայի համար խողոգոյն վտանգի աղբիւր, նոյնը և անդրկովկասեան ընդհանուր դեմոկրատիայի համար, ներկայանում է չափազանց կուսակցութիւնների կողմից ուղղված թշնամութիւնը անդրկովկասեան ժողովուրդների միջև։ հետևաբար խորհուրդը ողջունում է վրաց հանրապետութեան բռնած ընթացքը, որ ուղղված է չեզոքացնելու այդ թշնամութիւնը, եղբայրական միասնական գործունէութիւնը ամրացնելու և այդ ժողովուրդներին վերաբերեալ խնդիրներն ու վէճերը հաւասարաչափ կերպով լուծելու ապահովման։ 4) Օգտվելով նրանից, որ վրաց հանրապետութեան գլխին կուտակվել են ամպերը, նրա թշնամիները ճիգ են թափում վատթարացնելու նրա դրութիւնը անիշխանական քայլերով, ենթամատութեամբ և պրովոկացիաներով։ Դեմոկրատիայի պարտականութիւնն է՝ անարգանքի սիւնին գամել այդօրինակ ոճրագործութիւնները և պաշտպան հանդիսանալ դեմոկրատական իշխանութեան ու անխնայ կերպով կռիւ մղել այդօրինակ յանցագործութիւնների դէմ։ 5) Ժողովուրդների փոխադարձ յարաբերութիւնների մէջ արդարացութեան սկզբունքը կիրառելու խնդրում խորհուրդն իր ամբողջ յոյսը դնում է ինտերնացիոնալի գործունէութեան վրա, որ յարջորջել է իրան միջազգային սոցիալիստական բիւրո արևմուտքում, նոյնպէս և դեմոկրատիայի միութեան և, առանձնապէս, նրա սոցիալիստական տարրերի վրա, որ գտնվում են Անդրկովկասում։

ԹԻՒՐՔԻԱՆ ՁԻՆԱԹԱՓ Է ԼԻՆՈՒՄ

—

(Բոլշեվիկեան մամուլի բիւրո Մոսկվայից, 4 նոյեմբերի)

ԿԱՑԱՐԱՆ ԿԱՐՆԱՐՏՕՆ, 2 նոյեմբ.—Թիւրքերը համաձայնեցին զինադադարի պայմանների ոյժով իսկոյն ցրել զօրքերը և յանձնել բոլոր ռազմանաւերը։

ՑԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱՅՈՒՄ

—

(Բոլշեվիկեան մամուլի բիւրոյից)

ԲԵՐԼԻՆ, 2 նոյեմբ.—Բուդապեշտում չորեքշաբթի երեկոյեան ցուցարարներին միացան զօրքերը։ Զինուորները աղաղակում էին «Կեցցէ՛ հանրապետութիւնը»։ Ուշ գիշեր յեղափոխական զօրամասերը գրաւեցին արևելեան կայարանը։ Զօրաճակատ ուղարկվող երկու վագոն զօրքերը ետ պահվեցին։ Այդ զօրքերը միացան յեղափոխականներին։ Շատ մասնաւոր անձինք ձեռք են բերել զէնքեր։ Ապատաժներն ունեն գնդակացիներ, մեծ քանակութեամբ ռազմանիւթ ու ամեն տեսակ զէնք։ Ունգարական հրացանի գործարանը բոլորովին կողոպտված է։ Կէս գիշերին տեղեկութիւն ստացվեց, թէ Բուդապեշտի 32 դ զօրագունդը հրաժարվել է հնազանդվել կառավարութեանը և մտադրան իր ծառայութիւնն է առաջարկել հանրապետութեանը։

ՎԻԵՆՆԱ, 2 նոյեմբ.—Զինուորների մէջ սիրում է յուզմունք։ Ամեն օր տեղի են ունենում զինուորների միտինգներ պարլամենտ առաջ. միտինգները կրում են բոլշեվիկեան բնոյթ։

ԲԵՐԼԻՆ, 2 նոյեմբ.—Հաղորդում են, թէ Վիեննայում հաստատվել է զինուորների ժամանակաւոր խորհուրդ, որին կից կազմվել են 12 մասնաժողովներ։ Պատգամաւորները են ուղարկված զօրանոցները ստիպելու զինուորներին երդումն տալու ազգային խորհրդին։ Զինուորները իրանց միջից ընտրում են խորհուրդներ։ Վիեննայի խորհուրդը բաղկացած է լինելու 200 զինուորից։ Գերմանական Աւստրիայի բոլոր զօրքերին կից կազմակերպվելու են նոյն տեսակ խորհուրդներ։

ՎԻԵՆՆԱ, 2 նոյեմբերի.—Երկիւղ կայ, որ դաշնակիցները զինադադարից յետոյ դրաւեն Վիեննան։

ՎԻԵՆՆԱ, 2 նոյեմբ.—Անդրաշի միներութեան ժամերը հաշված են։ Կայսրը վերցնելով իր հետ թանգարժէք իրերը՝ գնվում է Գիզելհուս։

ՎԻԵՆՆԱ, 2 նոյեմբ.—Ցոյցերը Վիեննա

յում, որոնք սկզբում ունէին բուրժուական բնոյթ, այժմ կրում են յեղափոխական։ Երևացել են բանուորներ մեծ խմբերով, որոնց ցուցանակների վրա մակագրված է «Կենցաղ սոց.-դեմ. հանրապետութիւնը», «պահանջում ենք Ազէրին ազատել»։

ՄՈՍԿՎԱ, 4 Նոյեմ.—Կենտրոնական գործիք կոմիտէն և Մոսկվայի խորհուրդը ծագիր կոմիտէն Աւստրո-Ունգարիայի կոչ հրատարակեցին Աւստրո-Ունգարիայի պրոլետարիատին, ողջունելով նախկին պրոլետարական միապետութեան դիւաւորո-ունգարական միապետութեան զոհերին, բանուորներին և զինուորներին։ Կոչի մէջ ի միջի այլոց յորդորվում է կռիւ մղել անգլո-ֆրանսական-ամերիկեան և գերմանական կապիտալի դէմ, որպիսի կռիւին ըստ ամենայնի կոչակցի խորհուրդների Ռուսաստանը։

Ազէրի ազատութեան առիթով Մոսկվայի պրոլետարիատը միտինգներ է կազմում։

ՎԻԵՆՆԱ, 2 Նոյեմբ.—Բանուորներից կազմակերպվեց կարմիր գվարդիա։ Հակառակ ուսանողները և օֆիցէրութիւնը կազմակերպում են սպիտակ գվարդիա։

Կրօտական կառավարութիւնը ամեն յարաբերութիւն խզեց Բուդապեշտի հետ։

(Գերմանական մամուլի միջոցով, 3 Նոյեմ.)

Աւստրո-գերմանական պետական խորհուրդը Վիէննայից դիմել է Աւստրիայի գերման ժողովրդին, յայտնելով թէ նորակազմ աւստրո-գերմանական պետութեան հետ մշակված է ժամանակաւոր սահմանադրութիւն, նաև ընտրված է պետական խորհուրդ, որ այժմ ընդունում է կառավարական իշխանութիւն Աւստրո-Գերմանիայում։ Պետական խորհուրդը նշանակում է իսկոյն առաջին աւստրո-գերմանական կառավարութիւն, որ կը վարէ հաշտութեան բանակցութիւններ և կը ստանձնէ Աւստրիայի գերմանական շրջանները կառավարելու գործը և աւստրո-գերման զօրքերի հրամանատարութիւնը։ Աւստրո-գերմանական կառավարութիւնը երաշխաւորում է ազգային փոքրամասնութիւնների լիակատար ինքնավարութիւնը գերմանական շրջանների մէջ, յուսալով որ ազգ. կառավարութիւնները նոյն կերպ կպահովեն ալաւոնական շրջանների փոքրամասնութիւնների իրաւունքները։ Խորհուրդը յորդորում է Աւստրիայի գերման ժողովրդին հանդիսատեսել, զարգացնել ինքնակարգապահութիւնը և խուսափել այն ամենից, որ կարող է արգելք լինել կառավարական իշխանութիւնը գերման ժողովրդի ձեռքը տալուն Աւստրիայում և հաշտութիւն կնքելուն, որ կարող է գլուխ բերել գերմանական ժողովրդական կառավարութիւնը գերմանական պետութեան հաստատութեամբ։

Վիէննայում կազմակերպվել է զինուորական պատգամաւորների ժող. խորհուրդ։

Երէկ սկսվեցին բանակցութիւններ աւստրո-գերմանական զօրք կազմակերպելու վերաբերմամբ։

Վարշավայի լրագրները հաղորդում են, թէ Լվով քաղաքը վերցրել են գերմանաաւստրիական և ուկրայնական ազգութեան զօրագնդերը։ Տեղական զօրքերը հեռացել են առանց դիմադրութիւն ցոյց տալու։ Գեներալ Գուլիալկիի վրա յարձակում գործեցին Զօլանկիայի նախկին զօրքերը Սան գետի կողմից։ Պերեմիշլի վրա գործված յարձակումը Գուլիալկին վանեց օրվայ ընթացքում ուսանողների և հաւատարիմ մնացած լեգէօնների գլուխ կանգնած։ Սան գետի երկաթուղային կամուրջը պայթեցված է։ Պերեմիշլը գտնվում է բուսինների ձեռքում։

«Դոզենա Գոլոկա» լրագիրը յայտնում է, թէ աւստրիական առանձին զօրքը գեներալ Խասաքի հրամանատարութեամբ, որին կից գտնվում է արքիդուքս Վիլհելմը, առաջանում է դէպի Լավա-Ռուսկա և Զամոկ։

Սակսոնական սէյմի երկրորդ պալատը 75 ձայնով 3 անկախ սոց.-դեմոկրատների ձայների դէմ՝ ընդունեց պարլամենտական կառավարութեան մասին կազմված օրինագիծը։ Սոցիալիստները Ֆրէյդոլֆի և Խէլդ, ժող. առաջադէմ կուսակցութեան անդամ Դենտէր և նացիոնալ-լիբերալ Նիչկէն նշանակվել են մինիստրներ։

ԲՕԼՇԵՎԻԿԵԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

(Մամուլի բիւրօ)

ՄՈՍԿՎԱ, 4 Նոյեմբ.—Այսօր բացվեցին Բաքէսպէէրի, Շեվչենկոյի, Կոլցովի և Նիկիտինի արձանները։

Խորհուրդների զօրքերը վերցրել են Բուզուլուկը և Բուգուրլանը ու հետապնդում են հակառակորդին։

Պալովսկի ուղղութեամբ կազակներն անկարգ նահանջում են։

ԽԱՐԿՕՎ, 2 Նոյեմբ.—Այսօր շրջապատվեց քաղաքը, կատարվեցին խուզարկութիւններ ու կալանաւորութիւններ։ Նոյնական տեղեկութիւններ ստացվել են ուրիշ քաղաքներից։

ՕԴԵՍՍԱ.—Երևան հանվեց Դոնի գրամներ կեղծող մեծ գործարան։

ԿՈՒՐՍԿ.—Ղրիմում անիշխանութիւն է։ Կոմունիստական կուսակցութիւնն աճում է և բացարձակ կռիւ մղում։

ՎԱՐՇԱՎԱ, 3 Նոյեմբ.—Կրանովի հրատակամարտները նահանջում են, աւերելով գիւղեր, կողոպտելով ստացուածքներ։

ԲՕՍՏՕՎ Դ./Վ., 3 Նոյեմբ.—Վլադիկավկազի երկաթուղագծի գործադուլը ծաւալվում է։

Արժաւորից հաղորդում են, թէ յեղափոխական շարժումը ընդգրկել է և Սաւրոպոլի նահանգը։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ, 1 Նոյեմբ.—Տեղի ունեցան արտաքինքական պահանջների հանդիսական պայթումներ։

ՍԱՐԱՏՕՎ.—Ատրախանում բացվել է երկրային հանդիսարան։

ՄՈՍԿՎԱ. — Հիւսիսային զօրաճակատի վրա թշնամին եռ է քաշում իր զօրքերը։

ՊԱՏԵՐԱԶՄ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԵՐԼԻՆ, 4 Նոյեմ.—Արևմտեան զօրաճակատ, Կրոնպրինց Ռուպրէխտի, գերմանական կրոնպրինցի եւ Գալիցիի զօրաքանակներ։ Առաջապահ ընդհարումներ են Գէնտից հիւսիս մեր նոր զօրագծերի առաջ։ Մենք ճակատում ենք այստեղ թշնամուն ջրացքի և քաղաքի արևմտեան մասի մոտ։

Վալանսէէնից արևելք մենք մի փոքր եռ քաշեցինք մեր զօրաճակատը։ Երեկոյեան թշնամին գտնվում էր Օնեց կոնտէնի և Վիլերպոլի մոտ։

Լէ Կէնոուսի և Լանդրէսի մոտ ուժեղ թշնամի զանգվածներ էին։ Լանդրէսից արևմուտք մենք վանեցինք թշնամու վերսկսած յարձակումները։

Ուազի և Էնի միջև երեկոյեան մոտ թշնամի զանգվածները սաստկացան։ Աւելի ուժեղ էր Գիզի և Բանոնի մոտ։ Մենք, բացի երէկ հաղորդած զօրաճակատը էնից արևելք եռ տանելուց, նոյնպէս մի փոքր եռ քաշեցինք մեր զօրագծերը Մասսի արևմտեան ուղղութեամբ։

Սօմմայի և Բէրլայի միջև ամերիկեան ուժեղ յարձակումները մենք կանգնեցրինք Բէրլայից հիւսիս ընկած անտառում։

Մասսի արևելեան ափում թշնամու մասնաւոր ուժեղ յարձակումներն աջողութիւն չունեցան, ինչպէս և Մասսի և Մոզելի միջև թշնամու յարձակի գրոհները։ Մոզելից արևմուտք մենք թողինք մեր փոքր խրամատները։

(Երեկոյեան)։ Զափազանց լարված կռիւ է Շելդայի և Ուազի միջև։ Անգլիացիք և ֆրանսիացիք նորից ջնջեցին գործ դրին ճեղքելու մեր զօրաճակատը ուեսի քան 60 կիլոմետր երկարութեան վրա, բայց անապատ Լէ Կէնոուայի և Լանդրէսի միջև Բաբանամու հարաւանցին դիմադրեցին մեր պահեստի զօրամասերը։ Մասսից արևմուտք զարգացան կռիւներ Դիէլեմի անտառում։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒՏՈՒ ԲԻՒՐՕՑԻՑ

✦ Հայաստանի հանրապետութեան դիւանագիտական մասին Վրաստանում Փոքրիկ հայկական հիւպատոսարանի կառավարիչ Դ. Թիւրքանից ստացել է սոյն թուի հոկտեմբերի 28 ից գրված հետևեալ պաշտօնական թերթը, որի պատճէնը տալիս ենք ստորև։

«Սրանով յայտնում եմ ի գիտութիւն ձեզ, որ այս վերջին ժամանակներս հայերի դէմ, որ այս վերջին Ռուսաստան աւելացել է, գաղթը դէպի Ռուսաստան աւելացել է։ Փոքրի են գալիս բազմաքանի մեծ խմբերով գաղթականներ, որոնք նպատակ ունեն անցնել Դոնի շրջանը։

«Աչքի առաջ ունենալով գերմանացիների հեռանալը, որոնք արդէն մեծ արագութեամբ մեկնում են, այլև հայ գաղթականներին հնարաւոր չէ լինի օգտվել գերմանական նաւերով։ Ցնում են մասնաւորապէս, որոնք շատ բարձր գներ են վերցնում։

«Կամաւորական բանակի նաւերը, որոնք շաբաթը երկու անգամ են լինում, այս էլ ոչ կանոնաւոր, առաջին հերթին վերցնում են ռուս զինուորականներին, իսկ սրանք այնքան են, որ հայերին շատ քիչ տեղ է մնում, և սրանք ստիպված մնում են այստեղ՝ սպասելով մեր նաւին։

«Այստեղ չէ կան յարմար բնակարաններ՝ նրանց պատսպարելու համար։ Թէև կան վրաններ, բայց սրանք քիչ են և այն էլ տեղեր անձրևային եղանակներին անօգուտ։ Շատերը նաւին սպասելով վերջացնում են դրամական միջոցները, իսկ իմ արտադրութեան ներքոյ միջոցներ չէ կան։

«Այս բոլորն ի նկատի ունենալով՝ սրտանով խնդրում եմ ձեզ, եթէ հնարաւոր գտնէք, կարգադրել դադարեցնելու գաղթականներին այս կողմ ուղարկելը, մանաւանդ որ Ախալքալաքի շրջանը, ինչպէս և Ալեքսանդրոպոլինը, արդէն դատարկվում է, և հայերը կարող են վերադառնալ իրանց բնակավայրը աւելի փոքր ղժկանքներով, քան նրանք կրում են այս կողմով ճանապարհ անցնելիս»։

Յայտարարելով այս գրութիւնը հանրութեան, Հայաստանի դիւանագիտական մինիստր Վրաստանում՝ կոչ է անում գաղթականներին, որ սրանք դադարեն մտնել դէպի Փոթի։

✦ Ի պատասխան վրաց արտաքին գործերի մինիստրի այդ առիթով չէ բանակցել Հայաստանի դրծերի հաւատարիմատարի հետ և գեն. Ամիրխանովի միջոցով պահանջել՝ գոյքը իրան յանձնելու մասին՝ եղել է առանց վերջնական գիտութեան և հաստատութեան, Հայաստանի հաւատարիմատարը այդ առիթով ուղարկեց Վրաստանի արտաքին գործերի մինիստրին՝ կարուկ մեջբերներ ձեռք առնել գարնիզոնի պետի կարգադրութիւնը փոխելու համար։

ԲԱԳՈՒՆ

Բագու է եկել անգլիական մի պատուիրակութիւն, որն առաջարկել է քաղաքն առանց կռիւ յանձնել Բիչերախովի զօրքերին։

Բիչերախովի զօրքերի մի մասը գտնվում է Նարդէս կղզում։

Վերջին տեղեկութիւնները հաստատում, Բիչերախովի զօրքերն արդէն մտել են քաղաք։ Ազրբէյջանի կառավարութիւնը նը-բանց ոչ մի դիմադրութիւն չէ ցոյց տուել։

ՀՐԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԸ

Հրէական ազգ. խորհուրդը իր արտակարգ ժողովում, Վրաստանի հրէայ ազգաբնակութեան կողմից ընտրված պատգամաւորներին վրաց պարլամենտի անդամ չէ հաստատելու տարիքով՝ որոշեց բողոքել իր անդամներին չէ հաստատելու դէմ։

ՍԵՆՇԻԿՈՎԸ ԳՆԴԱԿԱՀԱՐՎԱԾ

Կիևի թերթերը հաղորդում են, որ Պետրոգրադում բոլշևիկների ձեռքով գնդակահարված է «Нов. Время»-ի աշխատակից, յայտնի հրապարակախօս Մենշիկովը։

«РУССКІЯ ВѢДОМОСТИ»Ն

«Известія»-ն հաղորդում է, թէ Սամարա եկան «Рус. Вѣд.»-ի աշխատակիցները մտադիր են վերսկսել թերթի հրատարակութիւնը Սամարայում։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲՕՀԵՄԻԱՆ

Գերման մամուլի բիւրօն հոկտ. 31-ից հաղորդում է, որ Բոհեմիայի գերման պատուիրակները Բոհեմիայի համար կազմել են սահմանադրութիւն, մինչև որ պարզվի գերմանական Աւստրիան դեմոկրատիկ սկզբունքներով կառավարելու խնդիրը։

Բուդապեշտում նոր մինիստր նախագահ է նշանակված Իոհան Խադիկ։

ԲՕԼԳԱՐԻԱՅԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Բոլգարիան դաշնակիցների առաջ պարտականութիւն է յանձն առել պաշտպանել իր հողաբաժինը այն դէպքում, եթէ Գերմանիան արշաւանքի ձեռնարկէ իր դէմ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՍԻՐԻԱՅԻ ՀԱՐՑԸ

Հաւաստի գործակալութիւնը յայտնում է. Արտաքին գործերի ֆրանսիական սենատի միասիան, քննելով Փոքր Ասիայի դրութիւնը, գտաւ, «Ֆրանսիան դաշնակիցների համաձայնութեամբ պէտք է ապահովէ ճնշված ժողովուրդների ազատութիւնը և ամենից առաջ Հայաստանի և Սիրիայի։

ՖԻՆԼԱՆԴԻԱ ԵՒ ՇՎԷԴԻԱ

Հելսինգֆորսից հաղորդում են, թէ ֆ[illegible] լանդական կառավարութիւնը հակում [illegible] վերձենալ Շվէդիային և մատնիչ է [illegible] յօգուտ Շվէդիայի Ալանդեան կղզիները։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԵՐՄԱՆ ՄԻՍԻ[illegible]

✦ Լեհաստանում յուզում է տի[illegible] Լվովում հիմնվել է ուկրայնական ազգ[illegible] խորհուրդ, որը ձգտում է աւստրիական [illegible] բանակցութիւններն մինչև Ուկրայնային[illegible]

✦ Արևելեան Գալիցիայում լեհե[illegible] ուկրայնցիների միջև կռիւ է։

✦ Աւստրիայի գերմանական մասը նպատակ է դնում կոչ կայսրին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

✦ Նոյեմբերի 2 ին կ. Գոլոֆ Թիֆլիս վերադարձաւ։ Ազրբէյջանի պատուիրակութիւնը Բաքուի Զաղէի գլխաւորութեամբ, վերադարձաւ նաև լեհականների պատուիրակութիւնը։

✦ Վրաց կառավարութիւնը վերացրել է հայոց կառավարութիւնը բօներ չէ տալու արգելքը։

✦ Վրաց կառավարութիւնը ատրպատական ազգ. խորհրդին յանձնեց 15 000 ռուբլի։

✦ Այսօր, չորեքշաբթի, երեկոյեան ժամը 7-ին, Հայոց Ազգ. Խորհրդի շէնքում (Արամեանցի տուն III յարկ, № 15 սենեակ) կայանալու է խորհրդակցութիւն դպրոցական գործերի համար հանգանակութիւն կազմակերպելու։ Խորհրդակցութեանը հրաւիրված են հայկական բոլոր կազմակերպութիւնների ներկայացուցիչները։

✦ Գրական-Գեղագիտական Սալոնի հերթական jour fixe-ին առաջիկայ ուրբաթ ա. Շուշանիկ Խան Ազատ կը կարդայ բնֆիբաա՝ «Մեսերլինգի մասին և Բելգիա»։ Կը լինի նոյնպէս ընդարձակ կօնցերտային բաժին։

✦ Քաղաքային վարչութեան անդամ հանդուցեալ Մ. Ա. Զաքարի այրին՝ ա. Մ. Վ. Զաքարը ի յիշատակ իր ամուսնու նուիրեց Հայ Դրամատիկ Ընկերութեանը իր ամուսնու դագաղի վրա դրված ածուխէ պսակը և հանդուցեալի հարուստ թատերական գրադարանը։ Ինչպէս յայտնի է, հանդուցեալ Մ. Զաքարը մի քանի տարի եղել է Ընկերութեան խմբի ռեժիսէր և ապա վարչութեան նախագահ։

✦ Նոյեմբերի 4 ին, օրը ցերեկով, «Նոյ» հիւրանոցից անյայտ չարագործներ տարել են 40.000 ռուբլի։

✦ Երկու օր առաջ Սերգեեվսկայա փող., հրացանաձգութեան ժամանակ, վիրաւորվեց միլիցիատէր Արամեանցի որդին։

✦ Զբ նայած որ Թիֆլիսում հայերը ունեն բազմաթիւ փախստականներ և բարեգործական հիմնարկութիւններ (Կ. Հ. Բարեգործ., Նպաստամատոյց, Կենտրոնական Կոմիտէ, Ազգային Խորհրդի փախստ. բաժանմունք և այլն), այնու ամենայնիւ փողոցները լիքն են անտուն, մերկ ու քաղցած որբերով, որոնք կուչ եկած այս ու այն անկիւնում՝ հեկեկում են անձրևի տակ և հենց փողոցում մեռնում հիւծված, անօգնական։ Վերջապէս թուչ են մտածում մեր բարեգործական ընկերութիւնները, որոնք, որքան մեզ յայտնի է, ահագին գումարներ ունեն հաւաքած։

✦ Արդարադատութեան մինիստրութիւնը առաջարկել է կառավարութեանը՝ աւելացնել դատական վարչութեան ծառայողների ռոճիկները։

✦ Թիֆլիսում թոքերի բորբոքումից վախճանվեց հայկ. 3-րդ գնդի օֆիցէր ՑարՄելքումեան, որ զանազան ժամանակ աշխատակցել է հայ պարբերաթերթերին, Դէրանց թուում և «Գրակ. Գեղարուեստական Ամսագրի»։

✦ Արդարադատութեան մինիստրութիւնը նախագիծ է մշակում Վրաստանի մէջ նոր մասնաւոր վայրերը կառավարելու համար։

✦ Նոյն մինիստրութիւնը մանրամասն հրահանգ է մշակում սպեկուլիացիայի դէմ։

✦ Վրաստանի արտակարգ դատարանի նիստը բացվեց երէկ, նոյեմբերի 5-ին, դատաստանական վարչութեան շէնքում։

✦ Գործադուլ են արել հարկային վարչութեան, պետական դանձարանի և պետական պալատի ծառայողները և պաշտօնեաները, պահանջելով ռոճիկ յաւելում։ Մինչև բաւարարութիւն ստանալը գործադուլը շարունակվելու է։ Ընտրված է գործադուլային կոմիտէ։

✦ Քաղաքում շրջանառութեան մէջ են մտել ռուսական 500 ռուբլանոցներ, որից ունեն նաև գերմ. պատուիրակութեան անդամները։ Թղթադրամի սերիայի թիւը փոքր ինչ ջնջված է. բանկերը հրաժարվել են ընդունել նման թղթադրամներ, սակայն պետական բանկի կառավարիչը գտել է, որ դրանք կարող են գործածվել։

ԱՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՕԼԼԵԳ[illegible]

Հրատարակիչ՝

ԱՇԵԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԽՈՒ[illegible]

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆ[illegible]

Բժշկ. Բ. Նաւասարդեան[illegible]

Հիմնված 1880 թ.

(Տանիք Վերջերքի արքունի հանգ.)

Բացէ

Ամեն օր, բացի կիրակի օրերից

«ՕՏՕ»-ին և «ՕՏԱ»-ի ներքսկում բժշկ[illegible] խորհրդակցութեամբ՝ առ. 11—12

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժ[illegible] վեներական (սիֆիլիս) հիւանդութիւններին։

Բ. Գ. ԱՂԱՍԱՐՅԱՆ—10—12 ժ. ներքին [illegible] երկիսայոց հիւանդութիւն և ծաղկաւոր։

Մ. Դ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—12—1 ժ. մանկ. հիւ. վիրաբուժութիւն և վեներական (սիֆիլիս) հիւ.

Ե. Ա. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և նրվայոց հիւ.։

Դ. Ի. ՋԱՓԱՐԻՇԼԻ—10—11 ժ. ականջի, քթի և կոկորդի հիւ.։

Խ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մանրադէտ հիւանդ[illegible]

[illegible] 3 [illegible]

[illegible] հիւանդանոցի վիրաբուժ։

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ

Մեկից. Փեղց. Ա. ԵՍԱՅԵԱՆ

Հիմնաւոր բժշկութիւն սուր և խրոնիք[illegible] արիպերի, շանկրի, սիֆիլիսի (ներսը[illegible] կուսի Երլիխի խսկական «914»-ի և «606» հոռա մասնագէտ բժշկի հետ) սեռա[illegible] թուլութեան, և այլ վեներական [illegible] նորագոյն մեթոդներ և էլեքտրականութ[illegible] կաշուի տակ սրսկումներ, լուսաբուժ[illegible] վերքի փաթաթում, բանկա կպցնել, ծ[illegible] հատութիւն։ Մասաժ ձեռքով և էլեքտ[illegible] կանութեամբ։ Վարձակալի արձանի [illegible] Семеновская ул. № 9. Ընդունելութ[illegible] ամեն օր՝ 4—6 ժամը ճաշից յետոյ։ [illegible] նանց 6—7-ը։ 444 100—[illegible]

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՒՅՍ ՏԵՍԱԻ

Հայկ Տէվկանցի

ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ԿՆՈՒ

անասնաբուժութիւնների ժողովածու

Գինն է 5 ռուբլի

Դիմել գրավաճառներու և հեղինակի Армянскій базаръ, № 28.

(Չ.Կ.) 991 4—

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՈՎ ԵՆ

Սակաւաթիւ օրինակներ հետևեալ հրատարակութիւններից

1) ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ, Գր. Արծրունու, գ. 30

2) ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ, др. Гр. Арцруни, переводъ А. Аракелянца. գ. 4[illegible]

3) ЭКОНОМИЧЕСКІЯ ПЕРСПЕКТИВЫ ВОСТОЧНОЙ АНАТОЛІИ, Ал. Калантаръ գ. 4[illegible]

4) ՀԱՅԿ.ԽՆԴԻՐՆ ԵՒ ԱԶԳ. ՍԱՀՄԱՆԱԴՐ. ՀԱՅՈՑ, Ա. Սարուխանի գ. 3 ր. [illegible]

5) DIE HUNGERSNOTH IN TÜRKISCH ARMENIEN, von dr. Gr. Arzruni übersetzt von A. Amirchanjanz գ. [illegible]

Վերադիր վճարով պատուէր չէ ընդունվում։

Ճանապարհածախսը պատուիրողի [illegible]

(5)

Типографія "ЭКОНОМІЯ" Тифлисъ.